



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. մարտին /վերլուծություն/

2010թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14951 գործարքներ, որոնց քանակը 2009թ. մարտի համեմատ աճել է 36.2%-ով, իսկ 2010թ. փետրվարի համեմատ՝ 11.4%-ով:

2010թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3940 օտարման գործարքների 81.1%-ը կազմել են առուվաճառքները, 17.7%-ը՝ նվիրատվությունները և 1.2-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2010թ. մարտին, 2010թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 18.7%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 35.7%-ով:

2010թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. մարտին, փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 21.1%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 68.9%-ով:

2010թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2009թ.	մարտ 2010թ.	փետրվար 2010թ.
Կենտրոն	515600	469200	469200
Արաբկիր	388400	380000	370800
Քանաքեռ-Զեյթուն	299100	286100	281200
Նոր-Նորք	258600	237600	234400
Ավան	256700	239300	235700
Էրեբունի	271500	251400	246500
Շենգավիթ	264700	252200	247300
Դավթաշեն	279200	274000	269000
Աջափնյակ	254700	240500	240500
Մալաթիա-Մեքաստիա	245100	240300	235000
Նուբարաշեն	154700	144300	143500
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	289800	274100	270300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. մարտին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. փետրվարի համեմատ, աճել են 1.4%-ով:

2010թ. մարտին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 367 բնակարաններ, որոնց քանակը 2010թ. փետրվարի համեմատ աճել է 19.5%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 69.1%-ով:

2010թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2009թ.	մարտ 2010թ.	փետրվար 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	142300	142700	142000
	Ապարան	42300	44800	44800
	Թալին	49800	52800	52100
Արարատ	Արտաշատ	96800	91300	92600
	Մասիս	136500	128100	125400
	Վեդի	91100	94400	91700

	Արարատ	81500	87400	88300
Արմավիր	Վաղարշապատ	183200	158300	155500
	Արմավիր	127500	120200	120200
	Մեծամոր	85600	82200	80400
Գեղարքունիք	Սևան	101600	94600	92000
	Գավառ	56100	46400	45200
	Մարտունի	82200	85400	83200
	Վարդենիս	34800	33200	32300
	Ճամբարակ	17900	19500	19000
Լոռի	Վանաձոր	92800	90500	89400
	Ստեփանավան	56200	58200	57100
	Սպիտակ	74000	81300	80300
	Ալավերդի	36300	31000	30500
	Տաշիր	38100	35600	35000
	Թումանյան	6100	6100	6100
	Շամլուղ	3400	3400	3400
	Ախթալա	14000	14100	14100
Կոտայք	Արմավիր	152700	160600	160600
	Նոր Հաճն	136500	126800	124000
	Բյուրեղավան	112600	100900	103000
	Եղվարդ	127800	117400	117400
	Հրազդան	60000	63400	62700
	Ծաղկաձոր	182300	181500	181500
	Չարենցավան	87900	76200	77100
Շիրակ	Գյումրի	103000	120300	120300
	Արթիկ	65800	59400	58500
	Մարալիկ	32700	30800	30600
Սյունիք	Գորիս	128500	139600	137400
	Կապան	107400	100600	97800
	Սիսիան	97900	79500	79500
	Մեղրի	58300	58700	57900
	Ագարակ	35400	33500	32800
	Քաջարան	58100	61100	61100
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	75800	71600	71600
	Եղեգնաձոր	115800	105800	107800
	Զերմուկ	128600	112600	112600
Տավուշ	Դիլիջան	103000	99300	96400
	Իջևան	148400	138700	138700
	Բերդ	46000	42000	42000
	Նոյեմբերյան	36100	33900	33400
	Այրում	24400	24100	24000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. փետրվարի համեմատ, աճել են 0.8 %-ով:

2010թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 425 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 116, մարզերում միասին վերցրած՝ 309: 2010թ. մարտին, 2010թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 14.6%-ով, ընդ որում Երևանում՝ 56.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 4.0%-ով: 2009թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն

աճել է 61.6%-ով, ընդ որում Երևանում՝ 2.1 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 47.8%-ով:

2010թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2009թ.	մարտ 2010թ.	փետրվար 2010թ.
Կենտրոն	540000	486300	485300
Արաբկիր	432700	386000	379400
Քանաքեռ Զեյթուն	332500	291100	288700
Նորք Մարաշ	327100	285300	284500
Ավան	299500	243300	238500
Էրեբունի	305900	255700	251700
Շենգավիթ	300000	255200	251500
Դավթաշեն	328700	280500	277500
Աջափնյակ	294300	246500	243800
Մալաթիա-Մեքաստիա	289800	244500	242300
Նուբարաշեն	175300	147700	147500
Միջինը Երևանում /բացի Նոր Նորքից/	329600	283800	281000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. մարտին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. փետրվարի համեմատ, աճել են 1.0%-ով:

2010թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2009թ.	մարտ 2010թ.	փետրվար 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	152400	148000	146300
	Ապարան	43400	48200	47400
	Թալին	53900	55300	54300
Արարատ	Արտաշատ	107700	100600	100100
	Մասիս	153400	129900	126400
	Վեդի	95600	97000	94800
	Արարատ	84700	93500	93300
Արմավիր	Վաղարշապատ	187200	166500	166100
	Արմավիր	130900	125700	124700
Գեղարքունիք	Սևան	108600	96500	94900
	Գավառ	60300	48700	47700
	Մարտունի	84500	87800	86500

	Վարդենիս	40400	35200	34500
	Ճամբարակ	22300	21500	21200
Լոռի	Վանաձոր	106800	97500	96900
	Ստեփանավան	59600	61600	61200
	Սյիսակ	75500	83400	81500
	Ալավերդի	39800	35200	35000
	Տաշիր	41200	38700	38300
	Թումանյան	10400	10500	10400
	Շամլուղ	7400	7500	7500
	Ախթալա	17200	18200	18200
Կոտայք	Աբովյան	178400	168700	165500
	Նոր Հաճն	146500	135100	134600
	Բյուրեղավան	122500	109600	109600
	Եղվարդ	136800	128200	128100
	Հրազդան	78300	65700	64500
	Ծաղկաձոր	281000	307600	305600
	Չարենցավան	101400	80400	80300
Շիրակ	Գյումրի	124200	124400	123400
	Արթիկ	70600	61600	60800
	Մարալիկ	35200	31900	31600
Սյունիք	Գորիս	134400	144400	143900
	Կապան	116400	104600	104400
	Սիսիան	99400	84600	84400
	Մեղրի	60400	60700	59900
	Ագարակ	37400	35200	35000
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	87500	74200	73800
	Եղեգնաձոր	120600	114900	114600
	Ջերմուկ	109500	118700	116300
Տավուշ	Դիլիջան	115900	103100	100900
	Իջևան	157000	142100	141800
	Բերդ	48100	44100	43900
	Նոյեմբերյան	38500	35500	35100
	Այրում	25800	26000	26000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. փետրվարի համեմատ, աճել են 1.0 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. մարտին հանրապետությունում օտարվել են 1457 միավոր /987.75 հա/ հողեր, որից Երևանում` 97 միավոր /8.23 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 779 միավոր /906.87 հա/, որից Երևանում` 3 միավոր /0.53 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 466 միավոր /44.97 հա/, որից Երևանում` 61 միավոր /3.94 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 157 միավոր /10.49 հա/, որից Երևանում` 26 միավոր /2.12 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 42 միավոր /24.04 հա/, որից Երևանում` 7 միավոր /1.64 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 4 միավոր /0.52 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.10 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 8 միավոր /0.75 հա/:

2010թ. մարտին հանրապետությունում օտարված հողերից 1314 միավորի /872.46 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 88 միավոր /7.47 հա/, նվիրատվության գործարքներ՝ 121 միավորի /110.98 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /0.76 հա/ և փոխանակության գործարքներ՝ 22 միավորի /4.31 հա/:

Հանրապետությունում 2010թ. մարտին, 2009թ. մարտի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 28.4%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 39.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 12.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 2.1 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 312.52 հա, որից 303.60 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 17.8%-ը կամ 234 գործարքներ /64.92 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 24 գործարքներ /2.70 հա/, իսկ 81.8%-ը կամ 1075 միավորը /799.53 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 64 միավոր /4.77 հա/:

2010թ. մարտին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 5 գործարք /8.01 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2010թ. մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	3	1.16	8	0.25	13	1.29	1	0.11	4	0.48	49	3.53	10	0.65
Արագածոտն	9	12.92	0	0.00	3	1.66	5	0.83	65	70.09	0	0.00	37	4.54	2	0.05
Արարատ	0	0.00	0	0.00	4	0.39	5	0.06	85	81.59	0	0.00	60	5.24	2	0.03
Արմավիր	11	9.73	1	0.20	3	0.27	14	1.04	110	293.87	3	1.91	51	4.41	6	0.34
Գեղարքունիք	9	10.24	2	1.21	11	0.94	5	1.29	191	152.57	1	0.10	23	2.44	2	0.24
Լոռի	0	0.00	1	0.15	0	0.00	12	0.26	17	16.40	0	0.00	11	1.24	6	0.30
Կոտայք	8	7.90	2	0.83	12	0.76	38	0.54	70	41.96	17	8.14	79	7.88	7	0.14
Շիրակ	1	0.90	4	0.68	18	1.28	9	0.11	39	42.82	0	0.00	11	1.36	4	0.07
Սյունիք	2	2.54	0	0.00	1	0.16	1	0.05	40	31.25	0	0.00	3	0.15	1	0.01
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	1	0.08	1	0.004	4	0.71	0	0.00	7	0.67	1	0.03
Տավուշ	2	1.67	3	1.17	6	1.84	2	0.01	41	22.70	0	0.00	6	0.62	0	0.00
Ընդամենը	42	45.90	16	5.40	67	7.63	105	5.48	663	754.07	25	10.63	337	32.08	41	1.86

Ստորև ներկայացվում է 2010թ. մարտին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների

քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէկոլոգիայի համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					Բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի			
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	24	2.70	3	1.16	8	0.25	13	1.29	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	2	1.26	0	0.00	1	1.26	1	0.001	15	14.15	9	12.92	0	0.00	2	0.40	4	0.83		
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	0.45	0	0.00	0	0.00	4	0.39	5	0.06		
Արմավիր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	28	11.24	11	9.73	1	0.20	3	0.27	13	1.04		
Գեղարքունիք	1	0.20	0	0.00	0	0.00	1	0.20	26	13.48	9	10.24	2	1.21	11	0.94	4	1.09		
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	0.41	0	0.00	1	0.15	0	0.00	12	0.26		
Կոտայք	4	0.10	0	0.00	0	0.00	4	0.10	56	9.94	8	7.90	2	0.83	12	0.76	34	0.45		
Շիրակ	7	0.174	2	0.14	4	0.03	1	0.004	25	2.79	1	0.90	2	0.54	14	1.24	8	0.11		
Սյունիք	1	0.05	0	0.00	0	0.00	1	0.05	2	1.99	1	1.83	0	0.00	1	0.16	0	0.00		
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.08	0	0.00	0	0.00	1	0.08	1	0.004		
Տավուշ	4	0.45	1	0.37	3	0.08	0	0.00	9	4.24	2	1.67	2	0.80	3	1.76	2	0.01		
Ընդամենը	44	4.94	6	1.67	16	1.62	22	1.65	185	58.77	41	45.19	10	3.73	51	6.00	83	3.85		

Հանրապետությունում 2010թ. մարտին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.71 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. մարտին, 2009թ. մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 12.3%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 6-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 9.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 45.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 11.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 41.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. մարտին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	1.13	77.6	140.0	119.1	44	39.58	365.0	12000.0	4320.9

Ապարան						3	5.21	86.5	2727.3	565.5
Թալին	6	11.79	37.6	67.5	48.7	8	14.97	93.6	5494.5	520.0
Ծաղկահովիտ						9	10.15	79.5	1000.0	250.5
Արարատի մարզ										
Արտաշատ						30	30.75	335.1	10833.3	2225.5
Մասիս						20	28.70	200.0	11904.8	3000.0
Վեդի						34	21.79	207.0	10795.1	1834.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	10	9.70	63.2	210.7	116.9	23	18.66	294.3	9090.0	1222.7
Բաղրամյան						9	12.21	90.6	2561.1	689.6
Վաղարշապատ	1	0.03	1600.0	1600.0	1600.0	62	251.89	444.4	11764.7	3155.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	3.01	374.1	374.3	374.2	124	52.38	199.8	1875.0	420.0
Ճամբարակ	5	7.23	109.3	976.8	452.6	33	20.82	60.5	953.3	272.0
Մարտունի						2	0.22	51.1	2850.0	610.0
Սևան						11	12.26	52.2	2134.8	250.0
Վարդենիս						21	66.89	41.2	2575.1	442.5
Լոռու մարզ										
Ալավերդի						8	2.34	170.4	6424.2	845.5
Գուգարք								234.6	6065.9	1100.0
Սպիտակ								250.0	5555.5	630.5
Ստեփանավան						3	5.46	90.6	1686.6	365.2
Տաշիր						5	5.90	45.3	1384.4	183.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	0.87	68.1	849.2	424.2	27	5.44	279.3	11942.7	4654.8
Եղվարդ	2	3.03	260.0	274.1	267.1	24	26.65	174.4	11971.8	3483.0
Հրազդան	1	4.00	1322.5	1322.5	1322.5	19	9.86	130.5	10256.4	1720.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						13	15.69	252.0	1693.1	528.5
Ամասիա						6	6.78	40.9	261.0	128.6
Անի						12	15.13	110.6	546.9	295.6
Աշոցք						2	1.73	58.5	215.8	114.4
Արթիկ	1	0.90	520.0	520.0	520.0	6	3.49	79.4	1428.6	265.8
Սյունիքի մարզ										
Գորիս						17	7.91	92.6	1023.2	517.0
Կապան	1	1.83	84.0	84.0	84.0			120.0	841.6	295.8
Մեղրի								193.0	3000.0	612.5
Սիսիան						23	23.34	46.3	1977.4	318.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	0.71	125.0	10000.0	1590.0
Վայք								58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ						11	1.68	213.3	3783.8	560.5
Իջևան	2	1.67	485.3	1313.3	899.3	3	0.61	267.5	9454.5	1090.5
Նոյեմբերյան						27	20.41	46.7	7368.4	810.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. մարտին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների
---------------------------------------	--	--

	Միավորների քանակը	Մավերեւը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեւը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1200.0	36.8	36.8	36.8	32	33466.0	130.7	22200.0	2573.7
Ապարան						2	2770.0	124.1	609.6	267.5
Թալին	1	2787.0	85.0	85.0	85.0	1	1545.0	63.2	1454.8	142.0
Ծաղկահովիտ						1	5668.0	60.0	214.3	78.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	3940.0	533.0	826.0	678.0	19	22503.0	173.9	7140.3	893.1
Մասիս						30	19323.0	187.5	25000.0	1216.8
Վեդի						10	9357.0	126.1	5000.0	661.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2732.0	277.7	1400.0	992.6	9	10246.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						4	6426.0	100.0	833.3	188.0
Վաղարշապատ						38	27422.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	450.0	318.2	341.5	329.8	6	5998.0	186.6	1084.3	470.5
Ճամբարակ	6	4450.0	118.7	131.4	125.7	6	7250.0	71.3	2286.2	142.0
Մարտունի						10	10530.0	119.3	5000.0	274.4
Սևան	3	4500.0	118.5	393.3	210.1	1	600.0	240.0	3110.4	232.0
Վարդենիս								72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	620.0	114.3	1388.9	207.0
Գուգարք						2	980.0	77.9	14083.3	777.0
Սպիտակ						6	9010.0	104.9	1348.3	199.2
Ստեփանավան						1	800.0	88.2	1666.7	150.0
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	10	6204.2	465.5	3484.5	2229.3	39	38928.0	264.5	35353.5	2028.0
Եղվարդ	2	1410.0	1145.0	4750.2	2947.6	30	27283.0	173.6	27000.0	2874.5
Հրազդան						9	6998.0	117.7	34848.5	1340.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	9235.6	566.7	3166.7	1770.5	5	4080.8	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	5	2000.0	291.5	412.5	386.2	3	6070.0	67.9	180.6	128.0
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	3	1200.0	68.8	554.4	230.6	3	3490.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	748.0	112.2	1700.0	304.0
Կապան	1	1638.0	656.7	656.7	656.7	1	532.0	67.9	2638.9	240.0
Մեղրի						1	200.0	68.5	632.9	153.6
Միսիան								123.5	875.0	164.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	758.0	750.7	750.7	750.7	4	4410.0	96.7	7659.6	431.5
Վայք						3	2260.0	120.7	1448.3	164.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	3	17599.0	244.2	2300.0	1614.7	3	3760.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան						3	2420.0	125.0	1948.1	168.0

2010թ. մարտին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարք 0.14 հա մակերեսով Լոռու մարզում:

2010թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1037 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 86.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2010թ. մարտին, 2010թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 14.0%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ նվազել՝ 10.8%-ով:

2010թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 77 բնակարանների, 48 անհատական բնակելի տների, 486 հասարակական, 69 արտադրական նշանակության օբյեկտների, 308 միավոր /4515.11 հա/ հողերի և 49 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 15 վարձակալության գործարքների /այդ թվում 4 միավոր՝ 0.26 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2010թ. փետրվարի համեմատ նվազել է 28.6%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 40.0%-ով: 2010թ. մարտին հանրապետությունում վարձակալված 4515.11 հա հողերից 4.68 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4510.43 հա հողերի 23.32 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 11.59 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 3582.01 հա, որից 3581.61 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3459.50 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. մարտին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	6	1.28
Արարատ	0	0.00	46	74.24
Արմավիր	0	0.00	6	15.02
Գեղարքունիք	0	0.00	29	672.67
Լոռի	0	0.00	3	8.63
Կոտայք	0	0.00	1	0.004
Շիրակ	1	3459.50	33	122.11
Սյունիք	0	0.00	11	34.29
Վայոց Ձոր	0	0.00	1	0.02
Տավուշ	0	0.00	12	9.39
Ընդամենը	1	3459.50	148	937.65

2010թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1962 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.1%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակը 2010թ. փետրվարի համեմատ աճել է 42.0%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 93.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /42.4%/, առանձնատների /25.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.5%/ և հողերի /15.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 862 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. փետրվարի համեմատ, աճել է 31.6%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 94.1%-ով:

2010թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 651.22 հա հողեր, որից 5.66 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 97.9%-ը կամ 637.29 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 474.43 հա, որից 473.92 հա գյուղատնտեսական:

2010թ. մարտին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 161 գործարքներ, որից 118-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 78.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15.5%-ն՝ անհատական բնակելի տների, 2.5%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.6%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.2% հողերի և 1.9%-ն՝ այգետնակների նկատմամբ: 2010թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 50.5%-ով, ընդ որում Երևանում՝ 49.4%-ով, իսկ մարզերում՝ 53.6%-ով: 2009թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 4.5 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.8 անգամ, մարզերում՝ 8.6 անգամ:

2010թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 1 գործարք՝ Երևան քաղաքում, որն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: Մասնավորեցման գործարքների քանակը, 2010թ. փետրվարի համեմատ նվազել է 75.0%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 80.0%-ով:

2010թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2610 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2010թ. փետրվարի համեմատ աճել է 29.2%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ՝ 45.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.7%/: